

Նորայր Բ. Պողոսեան (Լուս Անջելէս)
Բանասիր. գիր. թեկնածու

ԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
Անտիպ վաւերագրերի հիման վրայ*

Բանալի բառեր – հայ համայնք, Ամերիկահայոց թեմ,
Կալիֆոռնիա, թեմական պատգամաւորական ժողով,
Ֆրեզնո, ժողովի արձանագրութիւններ, փաստարկներ,
նոր թեմ:

Մուտք

Ամերիկեան հողի վրայ Հայ Առաքելական եկեղեցու (ՀԱԵ) Ամերիկա-
հայոց առաջնորդական թեմը հիմնադրուել է 1898 թուականին: Այս առի-
թով՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցու կոնդակով «այցե-
լու հովութիւնը» վերածուում է առաջնորդութեան: Կոնդակի մէջ նշուում է.
«Աշխարհիս բռնութեան փոթորիկը ամեն կողմ տարեր, ցրուեր էր զհայն
իւր հայրենի հողէն: Հեռաւոր Ամերիկան էր մնացեր ազատ այդ հոսան-
քէն, եւ ահա վերջին տարիներս այդ տեղ եւս լեցուեց հայն. եւ այն՝ միան-
գամայն եւ մեծ բազմութեամբ»¹:

20-րդ դարասկզբին սկսեց ստուարանալ հայութեան թուաքանակը
ԱՄՆ արեւմտեան նահանգներում, նախեւառաջ՝ Կալիֆոռնիայում:
Ստուարացող եւ տնտեսական առումով կայացող համայնքի մէջ բազմա-
թիւ գործոնների հանրագումարը աստիճանաբար հասունացրեց արեւմ-
տեան ափում առանձին, ինքնուրոյն առաջնորդական թեմ ունենալու
խնդիրը: ԱՄՆ Արեւմտեան թեմը հիմնադրուեց Ամերիկահայոց թեմի հիմ-
նադրումից մօտ 30 տարի անց՝ 1927 թվականին: Դրան նախորդող շրջա-
նի անցուդարձերի ու քայլերի մասին է մեր այս հրապարակումը՝ ցոյց

* Հոդվածում տեղ գտած ուղղագրական խնդիրների պատասխանատվությունը հեղինա-
կինն է: Խմբ.: Ընդունվել է տպագրության 19.12.2024:

¹ Պատմութիւն Արեւմտեան թեմի, 80 տարիներու ծառայութիւն, Բըրբանկ-Կալիֆոռնիա,
2008, էջ 14:

տալու համար, թէ 1910-1920-ական թուականներին ինչ ճանապարհ է անցել Արեւմտեան ափի հայութիւնը մինչեւ թեմի պաշտօնական հիմնադրումը:

1. Արեւմտեան թեմի հաստատման վերաբերեալ արխիւային նիւթերը

Արեւմտեան թեմի ստեղծման պատմութեան այս շարադրանքը հիմնուած է ձեռագիր վաւերագրերի եւ իր ժամանակի մամուլի հրապարակումների վրայ: Այդ վաւերագրերն այսօր պատմական արժէք ունեն և հայրենիքից հեռու եկեղեցական հաստատութեան շուրջ համախմբուելու ամերիկահայերի նախաձեռնութեան վկայականն են:

Արեւմտեան թեմի առաջնորդարանում պահպանուում են 20-րդ դարասկզբի եւ յետագայ տասնամեակների արխիւային մեծաքանակ ու կարեւոր նիւթեր, որոնք վերաբերում են Արեւմտեան թեմի պատմութեանը, անուղղակիօրէն նաեւ Հայաստանի անցուղարձերին, արտերկրի հայկական այլ համայնքներին ու գործիչներին:

Որոշ վաւերագրեր Միացեալ Նահանգներ են հասել Եղեռնից մազապուրծ հայորդիների ջանքերով, տասնամեակներ խնամքով պահպանուել, ապա ի պահ են տրուել Առաջնորդարանին, որպէս առաւել վստահելի պահոց: Դրանց մէջ կան վաւերագրեր, որ պատմում են 1918 թ. Հայաստանի անկախութեան շրջանի մասին կամ վերաբերում են ականաւոր հայ մտաւորականներին, որ այս կամ այն կերպ առնչուել են թեմի հետ: Օրինակ՝ կարեւորությամբ աչքի են ընկնում Զօրավար Անդրանիկի մի քանի գրութիւնները, որոնք պահպանել ու թեմին է փոխանցել իր զինակից Գարեգին Սահակեանը: Կամ, օրինակ, թեմի անդրանիկ առաջնորդ Գարեգին Եպս. Խաչատուրեանը 1929 թ. հրաւիրում է որպէս ատենապետ ղեկավարելու Աւետիս Ահարոնեանի գրական գործունէութեան 40-ամեայ յօբելեանի Կալիֆոռնիայի յանձնաժողովը, եւ այդ հրաւեր-նամակը հեղինակել է անձամբ Նիկողայոս Ադոնցը եւ այլն:

Արխիւային պահպանուած ամենահին վաւերագրերը Արեւմտեան թեմի Պատգամաւորական Ժողովի արձանագրութիւններն են, որոնք կանոնաւորապէս սկսել են գրառուել առաջին իսկ Ժողովից՝ 1917 թուականից: Ժողովի արձանագրութիւնները գրանցուած են 32x22 սմ մեծութեան տետրակում, որ ունի 140 մեծադիր էջ, հաստ կազմ: Արձանագրութիւնները գրուած են մանր ձեռագրով, սեւ եւ ւաւիլի քիչ՝ կապոյտ թանաքներով, 3 կամ 4 տարբեր անձանց կողմից: Տիտղոսաթերթին մատիտով գրուած

է՝ «Արձանագրութեան տետրակ Քալիֆորնիոյ Պատգամաւորական Ժողովոյ եւ Տնտեսական խորհրդոյ Հայոց Առաջնորդարանի Քալիֆորնիոյ, Ֆրէզնո. 1917 Յունուար 28-էն սկսեալ»:

Տետրակի արձանագրութիւնները բացառապէս հայերէն են: Արխիւի նիւթերի նախնական դիտարկումներից դատելով՝ **Ամերիկահայոց թեմական ներքին գրագրութեան մէջ հայերէնի գործածութեան նախապատուութիւնը եւ գերակշռութիւնը պահպանուել է մինչեւ 1950-1960-ական թուականները**, երբ ասպարէզ մտաւ Ամերիկայում ծնունդ առած նոր սերունդի հայութիւնը:

Այս հրապարակման մէջ ներկայացնում ենք Արեւմտեան թեմի հիմնադրմանն առնչուող արխիւային վաւերագրերից մի քանիսը: Դրանք դիտարկելու հնարաւորութիւն ենք ունեցել Արեւմտեան թեմի Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի արտօնութեամբ, որին յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

2. ԱՄՆ թեմական հաստատութիւնը 1898-1917 թթ.

1898 թ. հիմնադրուած Ամերիկահայոց թեմի առաջնորդարանը ձեւաւորուել է Վուստերում (Worcester), որը 1923 թ. տեղափոխուել է Բոստոն, իսկ 1927-ին՝ Նիւ Եորք, ուր կենտրոնացած էր ԱՄՆ հայութիւնը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին: Այստեղ պէտք է յստակեցնել, որ «Ամերիկահայոց թեմ» ասելով՝ նկատի ունենք մինչեւ 1927 թ. Արեւելեան եւ Արեւմտեան թեմերի առանձնանալը, երբ որ ԱՄՆ-ում Ս. Էջմիածնի հովանոյ ներքոյ միայն մէկ ընդհանուր թեմ էր գործում:

Անդրանիկ առաջնորդը Յովսէփ Եպս. Սարաձեանն էր, որ մինչ այդ եղել էր Վուստերի հոգեւոր հովիւը: Առաջնորդութիւնից հրաժարուելուց յետոյ 1908-1911 թ. նա եղել է Ֆրեզնոյի հովիւ, 1911-ին Մկրտիչ Ա. Խրիմեանը հրաւիրել է Վանի առաջնորդութեան, 1913 թ. իրականութեամբ 13-ին մահացել է վիրահատութիւնից յետոյ²:

Արագ աճող ամերիկահայ համայնքում եկեղեցական-ծխական կառոյցներ ստեղծուեցին Հարթֆորդում, Լինում եւ Մանչեսթերում (1898), ապա յաջորդեցին Չիկագոյի, Տրոյի (1899 թ.), Ուեսթ Հոբոկենի (առանձնացուած Նիւ Եորքի համայնքից 1900-ին), Նոր Բրիտանիայի (1900 թ.) եւ Ֆիլադելֆիայի (1902 թ.) համայնքները:

² Տե՛ս **Zakian Christopher Hagop**, ed. *The Torch was Passed. The Centennial History of the Armenian Church of America*, New York, 1998, էջ 14-15:

ՀԱՅ առաջին եկեղեցին՝ Ս. Փրկիչը, կառուցուել է Վուստերում, երկրորդ շինութիւնը՝ 1900 թուականին Ֆրեզնոյում: 1901 թ. Յովսէփ Եպս. Սարաճեանը Վուստերում անցկացրեց Միացեալ Նահանգների ՀԱՅ կանոնաւոր վեց համայնքների առաջին ժողովը, ապա 1902-ին համայնքները միաւորուեցին եկեղեցական Սահմանադրութեան ներքոյ: Որոշ աղբիւրներ Ամերիկահայոց թեմի հիմնադրումը հենց 1902-ն են համարում, օրինակ՝ Վ. Վերսթմանը ուղղակիորեն գրում է. «1902 թ. Սեպտեմբերի 2-ին ԱՄՆ-ում գործող հայ եկեղեցու ծովսերը կազմակերպուել են թեմի՝ Ս. Էջմիածնի ենթակայութեան ներքոյ»³:

1902 թ. Սահմանադրութիւնը, հաստատուած Մկրտիչ Ա. կաթողիկոս Խրիմեանի կողմից «ի գործածութիւն հայ ժողովրդեան Ամերիկայի»⁴, սահմանում էր թեմական հաստատութեան աստիճանակարգի մէջ հոգևորականների, աշխարհականների լիազօրութիւններն ու իրաւասութիւնը⁵: Ըստ այդմ՝ Ամերիկահայոց թեմն ունէր Ազգային կեդրոնական վարչութիւն, որպէս գործադիր մարմին, Երեսփոխանական ժողով, որի մէջ մտնում էին բոլոր ծովսերից ընտրուած պատգամաւորներ: 1918 թ. Ազգային կեդրոնական վարչութեան ատենապետն էր Եղիշէ Քհնյ. Գալշըճեանը, ատենադպիրը՝ Մաղաք Գ. Պէրպլերեանը, նախագահը՝ առաջնորդական տեղապահ Շահէ Ծ. Վրդ. Գասպարեանը:

1920 թ. դրութեամբ ԱՄՆ թեմի ենթակայութեան ներքոյ գործող ծովսերն էին.

Վուստերի Ս.Փրկիչ,

Բոստոն (սեփական եկեղեցի չունէր),

Լօվէի Ս. Վարդանաց

Փրավիդէնսի Ս.Թարգմանչաց

Քըննէթիքըթ (սեփական եկեղեցի չունէր)

Նիւ Եորքի Գրիգոր Լուսաւորիչ երկու եկեղեցիներ

Թրոյ-Վօթըրվիլթի Ս.Պետրոս

Ուեսթ-Հօպօքընի Ս.Խաչ

Ֆիլադելֆիայի Ս. Սահակ-Մեսրոպ

Չիկաքո (սեփական եկեղեցի չունէր)

Տիտոնի (սեփական եկեղեցի չունէր):

³ **Wertsman Vladimir**, The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book, New York, 1978, p. 5:

⁴ Ավելի մանրամասն տե՛ս Սահմանադրութիւն Հոգեւոր կառավարութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Առաջնորդական վիճակին Ամերիկայի, Վենետիկ, 1903:

⁵ Ավելի մանրամասն տե՛ս **Mirak R.**, Torn Between Two Lands; Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, p. 186-190:

Քալիֆոռնիա, որի մեջ մտնում էին չորս հոգաբարձություններ՝ **Ֆրեզնոյի, Ֆաուլքրի, Եդեմի եւ Լոս Անջելեսի**:

Ամերիկահայոց թեմի առաջնորդարանի ենթակայության ներքոյ էին նաեւ Տէրունի մի քանի ծովսեր, որոնք վերջնական ձեւաւորուած չէին՝ Սիրաքիւզ, Բիչմընտ, Քլիվլընտ, Էնթ Լուիզ, Քանատա, Հարաւային Ամերիկա⁶:

3. Կալիֆոռնիայում թեմ հիմնադրելու նախադրեալները

Կալիֆոռնիայում ինքնուրոյն թեմական հաստատութիւն ունենալուն, որ առաջին հերթին նշանակում էր հայութեան կեանքի ինքնակազմակերպում հոգեւոր, ազգային, կրթական եւ այլ իմաստներով եւ առանձնացում Ամերիկահայոց թեմից, բնական կերպով նպաստեցին մի քանի հիմնական գործոններ:

ա) **Կալիֆոռնիայում հայերի թուաքանակի աճով պայմանաւորուած նախադրեալներ**: 19-րդ դարի վերջին հայութիւնը գլխաւորապէս կենտրոնացած էր Արեւելեան նահանգներում, առաջին հերթին՝ Նիու Եորքում: Ըստ որոշ գնահատականների՝ 1885 թ. Հիւսիսային Ամերիկայում ապրում էր մօտ 1000 հայ: Նրանց գերակշռող մասը ամերիկեան ափերն էր հասել համիդեան բռնաձնշումներից հարկադրուած⁷, այսինքն՝ չհաշուած մինչեւ 19-րդ դարի 90-ական թուականները ԱՄՆ գաղթած անհատներին, ամերիկահայ գաղութն ըստ էութեան Օսմանեան Թուրքիայի հայահալած քաղաքականութեան հետեւանքն է: Ըստ «Literary Digest»-ի՝ 1919 թ. համար արդէն ունենք ԱՄՆ հայերի թուաքանակի 70 հազարի մասին պաշտօնական ծանուցում⁸:

1935-ին ԱՄՆ-ում հայերի թուաքանակը հասել էր 100 հազարի, մեծ մասը՝ ծագումով Թուրքիայից: Հետաքրքրութեան համար նշենք, որ 85 տոկոսը եղել են 15-45 տարեկան, 12 տոկոսը՝ 15-ից ցածր տարեկան⁹, այսինքն՝ ժողովրդագրական իմաստով սա երիտասարդ եւ աճող համայնք էր: Երկրորդ աշխարհամարտին մասնակցել են 20 հազար ԱՄՆ քաղա-

⁶ Տե՛ս Օրացոյց Հայաստանեայց Եկեղեցւոյց Ամերիկայի 1921. Պատկերազարդ եւ յաւելումներով, Բոստոն, 1920:

⁷ Տե՛ս Avakian Arra S., The Armenians in America, Minneapolis, 1977, էջ 35-37:

⁸ Տե՛ս Literary Digest, January 4, 1919:

⁹ Տուեալները՝ ըստ Mahakian Charles, History of the Armenians in California, San Francisco, 1935:

քացի հայորդիներ, որ համարում է ամերիկահայերի 10 տոկոսը, ուրեմն՝ 1940-ական թթ. ԱՄՆ-ում ապրող հայերի թիւը հասել էր 200 հազարի¹⁰:

Fiscal Year	Immigrant	Non-immigrant	Total
1880-1884	69		69
1885-1889	350		350
1890-1894	1,076		1,076
1895	612		612
1896	731		731
1897	813		813
1898	757		757
1899	674		674
1900			
1901	1,855		1,855
1902	1,151		1,151
1903	1,759		1,759
1904	1,745		1,745
1905	1,878		1,878
1906			
1907	2,644		2,644
1908	3,299		3,299
1909	3,108	238	3,346
1910	5,508	140	5,648
1911	3,092	183	3,275
1912	5,222	189	5,411
1913	9,353	201	9,554
1914	7,785	127	7,912
1915	932	86	1,018
1916	964	115	1,080
1917	1,221	119	1,340
1918	221	26	247
1919	282	95	377
1920	2,762	198	2,960
1921	10,212	360	10,572
1922	2,249	175	2,424
1923	2,396	190	2,586
1924	2,940	240	3,180
1925	576	279	855
1926	741	293	1,034

Նկար 1. Հայերի ներգաղթը ԱՄՆ 1880-1926 թթ., ըստ **2. Մաղաքեանի**¹¹:

Միւս կողմից՝ աստիճանաբար ստուարանում էր հայութեան թուաքանակն ԱՄՆ արեւմտեան նահանգներում, նախեւառաջ Կալիֆոռնիայում՝ ի հաշիւ հիմնականում Արեւմտեան Հայաստանից անմիջական ներգաղթողների եւ Միացեալ Նահանգների արեւելքից այստեղ տեղափոխուող հայերի: Հայերի ներգաղթի ամենամեծ աճի տեմպն ունէր Կալիֆոռնիան. միայն 1910-ին այստեղ հաստատուել է 379 հայ, 1920-ին՝ 962, 1930-ին՝ 3547 անձ:

Ի պատասխան 1910 թվականին Վուստերի թեմական գրասենեակի հարցման՝ Ֆրեզնոյի ծխական համայնքը յայտնում էր, որ Կալիֆոռնիա-

¹⁰ Տե՛ս **Wertsman Vladimir**, The Armenians in America 1618-1976; A Chronology & Fact Book, New York, 1978, էջ 13:

¹¹ **Mahakian Charles**, History of the Armenians in California, San Francisco, 1935, p. 7.

յում ապրում է 5000 հայ, որոնցից 4000-ը՝ Ֆրեզնոյում: Երբ 1917-1918 թթ. Կալիֆոռնիայի հայերը սկսեցին ինքնուրոյն թեմական կառույց ունենալու առաջին քայլերը, նահանգում արդէն ապրում էր մօտ 18 հազար հայ¹²:

Ամերիկեան գիտական գրականութեան մէջ 1880-1920 թթ. համարում է Նոր ներգաղթի ալիքի շրջան. այդ տարիներին բոլոր ազգերի մօտ 25 միլիոն ներգաղթեալներ են տեղափոխուել ԱՄՆ մշտական բնակութեան: Այդ ընթացքում ԱՄՆ բնակչութիւնը կրկնապատկուել է՝ հասնելով 100 միլիոնի¹³:

Ըստ զանազան վիճակագրական աղբիւրների՝ 20-րդ դարասկզբին հայերի հիմնական զբաղմունքը եղել է հետևյալը. կոշկագործ-3.500 անձ, դերձակ-2.200, հիւսն-1.400, ուստայնագործ-950, դարբին-720 եւ այլն՝ տարեկան 500-700 դուլար եկամուտով: Մտաւորական աշխատանքներից են եղել հետևյալները. ուսուցիչ-334, հոգեւոր սպասաւոր-107, ինժեներ-42 գրական աշխատող-40, բժիշկ-35: Հայութեան 8,6 տոկոսն ունէր սեփական տուն, բայց չնչին մասն էր ապրում գիշերօթիկ իջեւանատներում¹⁴: Կալիֆոռնիայի հայերի հիմնական զբաղմունքի առանձնայատկութիւնն այն էր, որ մեծ չափով ներգրաւուած էին գիւղատնտեսութեան մէջ, յատկապէս Սան Խոակին (San Joaquin) հովտում՝ Ֆրեզնոյում եւ շրջակայ փոքր բնակավայրերում: Սա գրաւիչ մի ոլորտ էր, որ արագ հարստացում էր խոստանում եւ այդ պատճառով էլ զանազան նահանգներից ձգում էր շատ ընտանիքների, այնքան, որ մամուլում յաճախ տպագրւում էին այդ լուրերի ոչ իրական լինելու մասին յորդորներ ու զգուշացումներ ներգաղթող հայերի համար:

բ) **Կրթական եւ մշակութային նախադրեալներ:** Կազմակերպուող համայնքներում առաջին հնարաւորութեամբ հիմնւում էին հայկական մէկօրեայ դպրոցներ, որի առաջին խթանը աւագ սերնդի ձգտումն էր՝ մայրենիի հանդէպ ունեցած սէրն ու կարեւորութիւնը փոխանցելու երիտասարդներին: Օտար միջավայրում իրենց զաւակներին հայերէն գրել, կար-

¹² Հետաքրքիր բաժանումներ կան ԱՄՆ ներգաղթեալ հայերի սերունդների վերաբերեալ: Օրինակ, **Արա Աւագեանը** բաժանում է.

1) Վաղ ժամանածներ 1620-1890,

2) Զանգուածային ներգաղթի սկիզբ 1890-1899,

3) Ներգաղթի երկրորդ ալիք 1900-1914,

4) Ներգաղթի երրորդ ալիք 1915-1924, որ վերաբերում է մեր նկարագրած ժամանակաշրջանին: Այդ մասին տես **Avakian Arra S.**, *The Armenians in America*, Minneapolis, 1977, էջ 38-46:

¹³ Տես **Kravitz Danny**, *Journey to America: A chronology of Immigration in the 1900s*. North Mankato, MN, 2016, էջ 35:


¹⁴ Տուեալները ըստ **Աւագեան Քնարիկ**, Ամերիկայի Միացեալ Նահանգների հայ գաղութի պատմութիւնը (Սկզբնաւորումից մինչև 1924 թ.), Եր., 2000, էջ 70-75:

դալ սովորեցնելու համար 1910–1920–ական թթ. դպրոցներ են հիմնադրուել Ֆրեզնոյում, Ֆաուլթրում, Եդեմում, Ռիդլիում, Թուլարում (Tulare), Լոս Անջելէսում, Սան Ֆրանցիսկոյում, Օքլանդում: Դասընթացներն անցկացում էին հանրակրթական դասերից յետոյ, բայց աւելի յաճախ՝ շաբաթ կամ կիրակի օրերին՝ առաւօտեան: Մէկօրեայ դպրոցները **գործել են ՀԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ԿԻՑ, սակայն բաց են եղել բոլոր դաւանանքի հայորդիների համար: Սա Ամերիկեան հողի վրայ ՀԱՆ հետաքրքիր առանձնայատկութիւնն էր, ուստի հարանուանական վէճերը համարժէք սրութեամբ չտեղափոխուեցին Ամերիկա:**

Ներգաղթեալ հայերի կրթական միջին աստիճանը չէր զիջում ամերիկացիների ընդհանուր միջինին: Վերը յիշատակուած «Literary Digest»-ը, որ ԱՄՆ պաշտօնական առաջին ուսումնասիրութիւնն ու վստահելի տուեալներն է հաղորդում հայերի մասին, նկարագրում է հայերի կրթական կացութիւնն այսպէս. «Հայերի շրջանում գրագիտութեան տոկոսը շատ աւելի բարձր է, քան ներգաղթեալ որոշ այլ խմբերի մօտ: Դատելով հայոց լեզուի իմացութիւնից՝ գրագիտութիւնը 90 տոկոս է, դատելով անգլերէնի իմացութիւնից՝ 60 տոկոս», «Հայերը կրթութիւնն այնքան բարձր են գնահատում, որ ով հնարաւորութիւն ունէր բարձր կրթութիւն ստանալու, հազուադէպ էր այն բաց թողնում»¹⁵: Ձգտումը մէկն էր՝ լինել «լավ քաղաքացի իրենց նոր երկրում» (“better citizens in their new home”):

20-րդ դարասկզբին ԱՄՆ-ում հայ մամուլի զարգացած ցանց ստեղծուեց: Կալիֆոռնիայում առաջինը ոչ կուսակցական «Քաղաքացի» պարբերականն էր, որ հիմնադրել է Հայկակ Եղունեանը 1902 թ. Ֆրեզնոյում: Երկրորդը՝ «Ասպարէզը», հիմնադրուել է կրկին Ֆրեզնոյում, 1908-ին: Դրանց բովանդակութիւնն առաւել կապուած էր Հայաստանի, Կ.Պոլսի անցուդարձերի, քան թէ Ամերիկեան կեանքի հետ:

¹⁵ Wertsman, New York, 1978, pp. 53, 69:



Նկար 2. Կալիֆոռնիայի հայերէն անդրանիկ պարբերականը՝ 1902-ին հիմնադրուած «Քաղաքացի» շաբաթաբերդը:

Արդէն առաջին/երկրորդ սերունդի հայերից մեծ ճանաչման էին արժանացել մի շարք հայորդիներ: Այս շրջանում են ծնուել Վիլիամ Սարոյեանը (1908 – 1981, Ֆրեզնո), Ռուբէն Մամուլեանը, որ հրաւիրուել է Հոլիվուդ՝ ֆիլմեր նկարահանելու, պլաստիկ վիրահատութեան հիմնադիրներից Վարազդատ Յովհաննէս Գազանձեանը, յայտնի հրուշակագործ Փիթեր Փոլ Հալաձեանը, գունատոր տպագրութեան գիտարար Ասատուր Սարաֆեանը եւ այլն¹⁶:

Այսինքն՝ պէտք է փաստել, որ Կալիֆոռնիայի հայերը 1910-ական թուականներին տնտեսական, մշակութային, կրթական առումներով հասել էին մի նշաձողի, որի տրամաբանական յաջորդ աստիճանը համայնքային ինքնակազմակերպումը պիտի լինէր նախ եւ առաջ իրենց առանձնայատուկ խնդիրները ձեւակերպելու եւ լուծել կարողանալու համար: Դրա հնարաւորութիւնը լաւագոյնս ընձեռում էր Հայ եկեղեցին, որ պատմականօրէն ստանձնել էր այդ դերը զանազան վայրերում:

¹⁶ 20-րդ դարի սկզբի ԱՄՆ անուանի հայերի մասին տուեալները տես Avakian, The Armenians in America, 1977:

4. Առկայ խնդիրները

Կալիֆոռնիայի հայերի գործունեության եւ համայնքային կազմակերպման ճանապարհին ծագում էին որոշակի խնդիրներ՝ սկսած տնտեսական, կենցաղային հարցերից մինչեւ ներգաղթեալների իրաւունքների պաշտպանութեան, ինտեգրման եւ ինքնութեան հարցերը¹⁷:

Զուտ եկեղեցուն յատուկ խնդիրներից էր այն, որ նոր սերունդի շրջանում թուլանում էր կապուածութիւնը հաւատքին, որ ընդհանուր էր Ամերիկայի ողջ բնակչութեան համար. «Հինգ կամ տասը ընտանեկան պաշտամունքին մասնակցելը, եկեղեցու պատերը համբուրելու կամ սրբազան կառոյցի մօտով անցնելիս գոնէ խաչակնքուելու սովորոյթը հայերի մօտ թուլանում էր արդիւնաբերական բազմազբաղ Ամերիկայում: Կիրակի օրերին եկեղեցի նուազ յաճախելիութիւնը, որի փաստերին ամենուր հանդիպում ենք ժամանակաշրջանի գրականութեան մէջ, հաստատում է ներգաղթեալ նոր սերնդի աշխարհիկ վարքագծի աճը»¹⁸:

1918 թ. Լոս Անձելէսի հոգեւոր հովիւ Ատոմ Քինյ. Մելիքեանը մի առիթով նշում է, որ քաղաքի 500-ի չափ հայութեան մէջ 50-ից աւելի անձինք դեռ մկրտած չեն, որը նա գնահատում է որպէս անտարբերութեան ցուցիչ եկեղեցու հանդէպ:

Մէկ այլ խնդիր էր հոգեւորականների պակասը: Ծովսի կազմաւորումը նախաձեռնում եւ ստանձնում էին հիմնականում աշխարհիկ անձինք, սակայն հոգեւոր արարողութիւնների համար պիտի կարողանային հոգեւորական ունենալ: Մեծացող հայ համայնքում հոգեւոր հովիւների պակասի խնդիրը տեղ է գտել ԱՄՆ թեմական կառոյցների քննարկումներում: Ամերիկայի ազգային կեդրոնական վարչութեան 1918 թ. յուլիս 12-ի նիստը, որ գումարուել է Բոստոնում, առաջնորդական տեղապահ Տ. Շահէ Ծ. վարդապետի նախագահութեամբ, մասնաւորաբար անդրադարձել է Ամերիկահայոց հայ գաղութի մէջ եկեղեցականների պակասի խնդրին եւ որոշել. «Ժողովը նկատի առաւ Ամերիկայի հայ գաղութին մէջ եկեղեցականներու պակասը, որու պատճառաւ շատ թեմեր կը մնան առանց հովիւի եւ

¹⁷ Հարուստ գրականութիւն կայ այն մասին, թէ ինչպիսի խնդիրների էին բախում նոր ներգաղթած հայերը եւ միւս ազգերի համայնքները Ամերիկայում, տե՛ս օրինակ՝ **Bakalian Anny**, *Armenian-Americans: From Being to Feeling Armenian*, New Brunswick, 1993, 1-89. **Crispino James**, *The Assimilation of Ethnic Groups*, New York, 1980. **Gleason Philip**, *American Identity and Americanization*; in *Harvard Encyclopedia of American Ethnic Groups*, Cambridge, 1980 եւ այլն:

¹⁸ **Mirak R.**, *Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I*. Cambridge, 1983, p. 194.

զուրկ հոգեւոր մխիթարութենէ: Խորհրդակցութիւններ կատարեցան յարմար քահանայացուներ գտնելու եւ ձեռնադրել տալու համար: Որոշուեցաւ շրջաբերականով մը դիմել հոգաբարձութեանց, որպէսզի իրենց շրջանակին մէջ եթէ կան յարմար ընտրելիներ, անոնց անունները ներկայացնեն Կեդրոնական վարչութեան»¹⁹:

Ամերիկեան հողի վրայ հայութեան ունեցած խնդիրները այսքանով չեն սահմանափակուում²⁰: Սակայն դրանք արգելք չեղան ծխական կեանքի ծաւալման, հետեւողական քայլեր սկսելու համար, գուցէ հակառակը՝ հնարաւորութիւն դիտուեցին խնդիրները լուծելու համար: Ինչպէս քիչ անց կը տեսնենք Ս. Էջմիածին ուղղուած խնդրագրի կէտերից, **ինքնորոյն թեմի ստեղծումը դիտուում էր հայութեան խնդիրները լուծելու հնարաւորութիւն, քանզի եկեղեցի հիմնադրելը շատ առումներով առաջ էր մղում հայութեանը** : Ականատեսը պատմում է, որ Վուստերում եկեղեցու կառուցումը տեղի հայութեանը մեծ չափով յարգանք է շնորհել քաղաքում, որը նախկինում չի եղել, անգամ յիշում է, որ շինարարութիւնից յետոյ իր հայրն այլևս չի հալածուել միւս քաղաքաբնակների կողմից²¹:

5. Կալիֆոռնիայում ՀԱԵ առաջին եկեղեցիները

Կալիֆոռնիայում հայերի առաջին կազմակերպութիւնը 1892-ին հիմնուած՝ հայ ներգաղթեալների միութիւնն էր, որ յետագայում վերանուանուեց Ֆրեզնոյի հայկական գրադարանային ընկերութեան: Նահանգի ՀԱԵ առաջին ծխական համայնքը ձեւաւորուել է Ֆրեզնոյում, ուր առաջին արարողութիւնը տեղի է ունեցել 1883 թ. սեպտեմբերի 17-ին՝ Ֆրեզնոյի բողոքական Առաջին միաբանական եկեղեցում: Ծովսի առաջին հոգեւորականն էր Ահարոն Քինյ. Մելքոնեանը, որ ծէսը կատարում էր ժամանակաւոր շինութեան մէջ մինչեւ նոր եկեղեցու կառուցումը, որի օծումը տեղի ունեցաւ 1900 թ. հոկտեմբերի 14-ին, առաջնորդ Յովսէփ Եպս. Սարաճեանի կողմից: Ս. Երրորդութեան յաջորդ հովիւը Տ. Սահակ Քինյ. Նազարեթեանն էր 1902 յունիսից, որ Ծովսի անդամների տները շրջում էր հեծանիւով, որ հետաքրքիր նորոյթ էր այն ժամանակ:

¹⁹ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 6, էջ 7:

²⁰ Այս թեմային է անդրադառնում մասնաւորապէս **Խաչիկ Թոյոլեանի** յօդուածը, յատկապէս ներգաղթեալների տարբեր սերունդների՝ կրօնական եւ էթնիկ առումներով ինքնութեանն արձագանքման տեսակետից, տե՛ս **Khachig Tololyan**, *The Role of the Armenian Apostolic Church in the Diaspora*, “Armenian Review” volume 41, Boston 1988:

²¹ Տե՛ս *Memory Fragments from the Armenian Genocide: A Mosaic of a Shared Heritage*, New York, 2002, էջ 85:

Հրդեհից յետոյ Ֆրեզնոյի նոր կառուցուած եկեղեցում առաջին սուրբ պատարագը մատուցուեց 1914 թ. ապրիլի 12-ին, օծումը՝ 1914 թ. դեկտեմբերի 13-ին Բոստոնի եպիսկոպոս Մուշեղ Եպս. Սերոբեանի ձեռամբ²²:



Նկար 3. Ֆրեզնոյի Ս.Երրորդութիւն Հայոց եկեղեցին 1918 թ., որտեղ տեղի են ունեցել թեմական անդրանիկ ժողովները:

Նոր եկեղեցին կառուցելու համար մեծ դեր է ունեցել հոգեւոր հովիւը՝ Վարդան Ծ. վարդապետ Գասպարեանը (1874-1967): Նա ժամանակին եղել է Երուսաղիմի Ս. Յակոբեանց միաբան, տարբեր հոգեւոր պաշտօններ է ունեցել, 1912 թ. տեղափոխուել է ԱՄՆ եւ ստանձնել Ս. Երրորդութիւն եկեղեցու հովութիւնը, որը անընդմէջ ծառայութեամբ վարել է մինչեւ 1933 թ.: Եղել է նաեւ Ֆաուլքրի, Եդեմի հոգեւոր հովիւ, երկու անգամ նշանակուել է թեմի Առաջնորդական տեղապահ, 1945-ին ձեռնադրուել է եպիսկոպոս: Վարդան Ծ. վարդապետ Գասպարեանը մեծ դեր ունեցաւ Ֆրեզնոյի շուրջը միւս համայնքները միաւորելու հարցում:

²² Տե՛ս <https://historicfresno.org/nrhp/holytrin.htm> (վերցուած է 2024 թ. դեկտեմբերի 20-ին):




Նկար 4. Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցու հովիւը՝
Վարդան Ծ. Վրդ. Գասպարեան՝ եպիսկոպոսական աստիճանով:

Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցին 1918 թ. ունէր Հայ դպրոց՝ 10 ուսուցիչներով եւ 150 աշակերտով, որոնց ուսման տարեկան վճարը 1 դոլար էր, ունէր Կիրակնօրեայ դպրոց, Տիկնանց եւ Բարեսիրական միութիւններ: Հետաքրքիր մի ծանուցում եկեղեցու կեանքից. «Պ. Գ. Փրօֆ. Գալֆայեանի հեղինակած պատարագի եղանակները երգուեցան միաձայն, երկսեռ խումբի մը կողմանէ, երգեհոնով, և հիմակ ալ կը շարունակուի ու խումբը կը պատրաստուի բազմաձայն երգելու»²³:

Այս տուեալները քաղում ենք եկեղեցու հովիւ Տ. Վարդան Ծ. Վրդ. Գասպարեանի՝ Ֆրեզնոյում հիմնադրած «Էջմիածին» ամսաթերթից (1917–18 թթ.), որ խիստ կարեւոր եւ արժանահաւատ փաստեր է պարունակում Ֆրեզնոյի իր ժամանակի հայութեան կեանքի զանազան կողմերի մասին:

²³ «Էջմիածին, Ֆրեզնո, 1918, N 7, էջ 6:



Նկար 5. Ֆրեզնոյի «Էջմիածին» պարբերականը, որ մշտապէս լուսարանում էր եկեղեցական կեանքը:

Ս. Երրորդութիւնը եկեղեցու 1918 թ. Հոգաբարձութեան խորհուրդի անդամներն էին Մինաս Խովկիկեան (ատենապետ), Յարութիւն Ռստակեան (ատենադպիր), Ադամ Պետոյեան (գանձապահ), Մելքոն Տաւրեան, Մարտիրոս Հալլաեան, Մարգար Շահպաղեան, Մամբրէ Գորգամաղեան, որոնց անունները յիշատակելի են այն առումով, որ հայութեանը եկեղեցու շուրջ համախմբելու եւ թեմական կառոյց ստեղծելու նախանձախնդիր ու հայրենասէր անձինք են եղել²⁴:

Ֆրեզնոն ունէր իր ներկայացուցիչը Վուստերի երեսփոխանական ժողովում, 1918 թ. դա Վարդան Քիրքեանն էր, որը մանրամասնորեն ներկայացրել է Կալիֆոռնիայի առանձին թեմ ունենալու հարցը Վուստերում, ինչպէս քիչ անց կը տեսնենք: Կալիֆոռնիայում նախաձեռնուած Պատգամաւորական անդրանիկ ժողովի օրերին Ֆրեզնոյից զատ եկեղեցիներ էին գործում հետեւեալ քաղաքներում.

Ֆաուլքրի (Fowler) Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, հիմնադրուած 1902 թ., առաջին հովիւն էր Թէոդորոս Քինյ. Իսահակեան,

²⁴ Ս. Երրորդութիւնը 1950-ական թթ. անցաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայութեան ներքոյ, սակայն դա, ինչպէս նաեւ համայնքի ձեւաւորման ընթացքում կուսակցական անցուղարձերը, դուրս են մեր քննութեան տեսադաշտից:

Եդեմի (Yettem) Ա.Աստուածածին եկեղեցի, հիմնադրուած 1909 թ., առաջին հովին էր Վարդան քինյ. Գուլտալեան,

Ռիդլիի (Reedlay) Ս. Սահակ-Ս. Մեսրոպ եկեղեցի, հիմնադրուած 1912 թ., առաջին հովիւը՝ Խաչիկ Քինյ. Գոռուգեան:

Լոս Անջելէսում (Los Angeles) ձեւաւորուել էր ծխական համայնք, սակայն եկեղեցի դեռ կառուցուած չէր: Բոլոր այս համայնքներն իրենց պատուիրակներով մասնակցել են պատգամաւորական անդրանիկ ժողովի աշխատանքներին:

6. Անդրանիկ Պատգամաւորական ժողովն ըստ արձանագրութեան

1910-ական թթ. տարբեր առիթներով բարձրաձայնուել է ինքնուրոյն թեմ ստեղծելու խնդիրը: Պահպանուած ձեռագիր վաւերագրերը եւ մամուլի նիւթերը²⁵ հնարաւորութիւն են տալիս վերականգնելու թեմի հիմնադրման այդ առաջին քայլերի ժամանակագրութիւնն ու տրամադրութիւնները:

1913 թ. Ֆրեզնոյի հովիւ Վարդան Ծ. վարդապետը տեղեկագիր է կազմում եւ ներկայացնում Կալիֆոռնիա այցելած Մայր Աթոռի ներկայացուցիչ Գէորգ արքեպիսկոպոսին, ներառելով ինքնուրոյն թեմ ունենալու փաստարկները: 1916 թ. Ֆրեզնոյի ծովսի 62 անդամներ հանրագիր են ընդունում եւ կոչ անում միւս ծովսերին՝ ներկայացուցիչներ ընտրելու եւ հարցը քննարկելու համար:

Կալիֆոռնիայի բոլոր ծովսերը (այն ժամանակուայ ատենագրութիւններում ծովսը նշում էր **թեմ**) ժողովներ են գումարել, ընտրել են պատուիրակներ՝ լիազօրելով իրաւասու պատգամաւորական ժողով գումարել:

Ծովսերում մասնաւոր քննարկումներից անդին՝ առանձին առաջնորդութիւն հաստատելու հարցն առաջին անգամ համատեղ պաշտօնապէս քննարկման նիւթ է դառնում Պատգամաւորական ժողովում:

Անդրանիկ հիմնադիր ժողովը հրաւիրուեց 1917 թ. Յունուարի 28-ին Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցում: Նիստերն անցնում էին եկեղեցու ներքին յարկում, «խորհրդարան» անունը կրող սրահում: Ֆրեզնոյի ժողովի քննարկումների եւ որոշումների արձանագրութիւնները կազմուել եւ գրի են առնուել կանոնաւորապէս:

²⁵ 20-րդ դարի սկզբին Կալիֆոռնիայում տպագրուած մամուլից առաջին հերթին նկատի ունենք՝ «Էջմիածին» կրօնա-բարոյական ամսաթերթ, Ֆրեզնո, 1918: «Ասպարէզ» շաբաթաթերթ, Ֆրեզնո, 1918: «Փարոս» Ֆրեզնո, 1927-28: Առաջնային աղբիւր է նաեւ՝ «Արաւոտ» ամսաթերթ Մայր Աթոռի, 1917-1918 թթ.:

պոս Կիլէսէրեան, որ միջին նահանգները կը ճամբորդէր, Սիաթըլ հասած է եւ խոստացած է Ֆրեզնոյ այցելել ամսոյն սկիզբները»²⁷, գրում է Ֆրեզնոյի «Էջմիածին» ամսաթերթը մի առիթով:

Պատմական այս ժողովի արձանագրութիւնն ամբողջութեամբ կարելի է ընթերցել սոյն հրապարկման վերջում: Նշելի է, որ օրակարգում եղել են երեք կէտեր՝ ա) «Միացեալ Նահանգաց Արևմտեան նահանգներու համար առանձին առաջնորդութիւն մը հաստատելու խնդիրը պաշտօնապէս ներկայացնել ուր որ անկ է, բ) Պիտձէի խնդիրը, գ) Երեսփոխաններու կամ պատգամաւորներու թիւին ճշդումը Քալիֆօռնիոյ Հայոց համեմատութեամբ:


Արձանագրութիւն կազմողը փոխանցել է ժողովի ընդհանուր տրամադրութիւնը՝ ասելով. «Բոլոր պատգամաւորները, իրենց ներկայացուցած եկեղեցիներուն կողմէն, ուրախութիւն յայտնեցին առանձին առաջնորդութիւն մը հաստատելու ծրագրին համար, երբ Ատենապետը առաջարկեց նկատի առնել խնդրին կարևորութիւնը»:

Ժողովում որոշում է պատրաստել երկու դիմում՝ ուղղուած Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ Ամերիկահայոց թեմին, որոնցով կը ներկայացունեն թեմական նոր հաստատութիւն հիմնելու իրենց փաստարկները, ապա առաջարկում է սպասել իրենց դիմումների պատասխան արդիւնքին եւ ըստ այդմ՝ յաջորդ նիստը հրաւիրել երկու շաբաթ անց՝ փետրուարի 11-ին, կրկին Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցում: Ատենագրութիւնը ստորագրել են ատենադպիր Մկրտիչ Մ. Խօլիկեան եւ ատենապետ Ս. Վ. Մելքոնեան: Անդրանիկ ժողովի արձանագրութեան տեքստն ամբողջութեամբ ներկայացուած է Յաւելուած բաժնում (տե՛ս Վաւերագիր 1):

Արձանագրութեան մէջ յիշատակուած՝ թեմական խորհրդի առաջին ատենապետ Սրապիոն Մելքոնեանը (1859-1918) համայնքում յարգի անդամներից էր, վաղանցիկ վախճանուել է 1918 թ., 59 տարեկան հասակում: Ժամանակակիցները նրան բնութագրում են որպէս «տեղիս գաղթականութեան հին դէմքերէն, որու կեանքը նուիրում եղած է ազգային եւ եկեղեցական գործերուն», «իբրեւ պահպանողական եւ բարեխառն բնւորութեան տէր, առհասարակ սիրուած եւ հարգուած էր ան»²⁸: Սրապիոնի գործուն եւ նախաձեռնող քայլերը մեծ դեր ունեցան ինքնուրոյն թեմ հիմնադրելու հարցը բարձրաձայնելիս եւ առաջ տանելիս:

²⁷ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 11, էջ 83:

²⁸ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 9, էջ 67:



Նկար 7. Սրապիոն Վ. Մելքոնեան, Ատենապետը Կալիֆոռնիոյ 1917 թ.
Յունուար 28-ի Պատգամաւորական անդրանիկ ժողովի:

7. Կալիֆոռնիայի հայերի խնդրագիրը Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ այլ վաւերագրեր

Առաջին կարելոր քայլն արուած էր այլեւս, եւ ժողովի որոշմանը համապատասխան՝ մասնակից պատգամաւորները Ամերիկահայոց Առաջնորդական թեմից առանձնանալու հարցով խնդրագիր են կազմում՝ ուղղուած Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Խնդրագիրը մանրակրկիտ ցոյց է տալիս հայրենիքից հեռու եկեղեցական հաստատութեան շուրջ ինքնակազմակերպուելու ձգտումները: Յատկապէս կարելոր են թեմ հիմնադրելու վեց կէտերի փաստարկները, որոնք լիովին արտացոլում են Կալիֆոռնիայի հայերի մտահոգութիւններն ու պատկերացումները: Այդ կէտերը համառօտ կարելի է ձեւակերպել հետեւեալ կերպ. Կալիֆոռնիայի հայերը ձգտում են ինքնուրոյն թեմ ունենալ, որպէսզի՝ ա) կասեցնեն օտար եւ հարուստ եկեղեցիների քարոզիչների «որսը», բ) կարողանան հոգեւորական պատրաստել, գ) տնօրինեն դպրոցներ հիմնելու գործը, դ) լուծեն ամուսնական բարդ հարցերը, ե) ՀԱԵ եւ ազգային սովորութիւններին համապատասխան կանոններ յստակեցնեն, զ) գաղութի ցրուեալ հայութեանը ի մի բերեն:

Խնդրագրի հեղինակները ենթադրում են, որ Հայաստանի շուրջ խաղաղութեան հաստատումից յետոյ հայրենիք պիտի վերադառնան որոշ թուով այն հայերը, որոնք հաստատուն գործ չունեն Ամերիկայում՝ հիմնականում աշխատող գործաւորներ, որոնք ապրում են միջին և արևելեան շրջաններում: Իսկ նրանք, ովքեր արդէն որոշ դիրքի են հասել, վաճառական են, հողատէր կամ տանուտէր, մանաւանդ Ամերիկայում ծնուած ու հասակ առած սերունդը, դժուար է, որ վերադառնան երկիր: Սա հաստատ է մանաւանդ Կալիֆոռնիայի հայերի համար: «Կ'արժէ նաև գիտել, որ Քալիֆորնիոյ Հայութիւնը հետզհետէ կը տեղաւորուի, կը զօրանայ և կը ստուարանայ: Հայեր ջանադիր են նոր հողեր գնել և ընդարձակել իրենց կալուածները», - նշում են խնդրագրի հեղինակները²⁹:

Ուշագրաւ է խնդրագրի այն փաստարկը, որ **«ի՛նչ ալ ըլլայ Հայաստանի կամ Կիլիկիոյ բախտը պատերազմէն ետքը, հայերը ամէն պարագայի տակ մեծաւ մասամբ պիտի մնան Ամերիկայի մէջ»**: Սա կարելի է, ըստ մեզ, ամերիկահայ գաղութի պատմութիւնը ներկայացնելիս. սա այն տարիներն էին, երբ հայութեան մէջ որոշակի յոյսեր կային Հայաստանում ու Կիլիկիայում պետական կազմաւորում ունենալու հարցում: Սակայն 20-30 տարուայ կազմաւորուած ամերիկահայ համայնքը գիտակցում էր ԱՄՆ-ում հայ գաղութի ապագան եւ իր քայլերը կատարում՝ այդ աչքի առաջ ունենալով (կաթողիկոսին ուղղուած խնդրագրի տեքստը տե՛ս Վաւերագիր 2) մօտ 3500 մղոն հեռաւորութիւնը: Այս ժողովականները Ամերիկահայոց առաջնորդին խնդրում են թարգման հանդիսանալ մեր կաթողիկոսի մօտ՝ «որդիական զգացումներով գրուած խնդրագրին» ընթացք տալու համար (տե՛ս Վաւերագիր 3):

Կալիֆոռնիայի հայերի այս տեղեկագիր նամակի պատասխան գրութիւնը Վուստերի առաջնորդարանից ստացւում է 1917 թ. մարտի 3-ին, **ուր յայտնում են, որ** «Միացեալ Նահանգաց Արևմտեան հայ գաղթականութեան յատուկ անջատ առաջնորդութեան համար ձեր առ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ուղղեալ Փետրուար 11 թ. պաշտօնագիրը, և իր տեսութիւններուն հետ մէկտեղ յղեցինք Ն. Ս. Օծութեան՝ զայս հաղորդելով Ձեզ ի գիտութիւն»³⁰: Այս փաստաթուղթը ստորագրել են Ամերիկահայոց թեմի կրօնական ժողովի Նախագահ և Առաջնորդ Արսէն Վ. Վեհունին, ատենապետ Տրիքոն Վ. Պիծակեանը, Ատենադպիր՝ Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեանը:

²⁹ Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 6, էջ 42:

³⁰ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 9, էջ 68:

8. Ս. Էջմիածնի արձագանքը

Ամենայն Հայոց կաթողիկոսի դիւանի հրապարակած փաստաթղթերը յուշում են, որ Նորին Ս. Օծութիւնը հեռագրով ստացել է Ֆրեզնոյի ժողովի զեկուցագիրը, Կալիֆոռնիայի պատգամաւորութեան անունից եւ թեմի կրօնական ժողովի ուղեկցող գրութիւնը, ապա Ամերիկահայոց առաջնորդ Արսէն Ծ. վարդապետի միջոցով Կալիֆոռնիայի հայերին է փոխանցել իր կարգադրութիւնը: Այն Ս. Էջմիածնի դիւանի անունից մամուլում հրապարակել է Տիրայր Եպիսկոպոսը, որ այն ժամանակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիւանապետն էր, յետագայում փոխադրուեց ԱՄՆ եւ երկար տարիներ Արեւելեան թեմի գործուն հոգեւորականներից մէկը եղաւ: Կարգադրութիւնը խիստ համարժէք է իրերի վիճակին, հազարաւոր մղոններ հեռաւորութիւնից Մայր Աթոռը տիրապետում էր խնդրին մանրամասն կերպով:

Ըստ Ս. Էջմիածնից ստացուած նամակի՝ «Կալիֆոռնիոյ մէջ առանձին առաջնորդութիւն հաստատելու նկատմամբ կրօնական ժողովի» գրութեանն ի պատասխան կաթողիկոսը յանձնարարում է ա) հարցը լիարժէք քննարկել Ամերիկահայոց Երեսփոխանական ժողովում, բ) քննարկումների մէջ ներառել նաեւ վարչական, տնտեսական, բարոյական տեսանկիւնները, գ) վերջնական եզրակացութիւնը ներկայացնել Վեհափառ Հայրապետի հաստատմանը (տե՛ս Վաւերագիր 4):

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այս յանձնարարագրի ա) կէտին համապատասխան՝ դրութիւնն առաւել հանգամանալից քննարկում է 1918 թ. ապրիլի 7-8-ի Վուստերում հրաւիրուած Երեսփոխանական ժողովում: Ի կատարումն Հայրապետական հրահանգի՝ Կալիֆոռնիայի պատգամաւորական ժողովն իր ներկայացուցիչին է ուղարկել Վուստեր: Այդ պաշտօնում նախապէս առաջարկուել է Տիար Յ. Նշիկեանի թեկնածութիւնը, սակայն նրա հրաժարուելուց յետոյ ընտրուել է Վահան Քիւրքճեանը, որ արդէն Ֆրեզնոյի երեսփոխանն էր պատգամաւորական ժողովում: Պ. Քիւրքճեան ընդունում է այդ պաշտօնը, մեկնում Վուստեր, եւ երեսփոխանական ժողովում ընդարձակ զեկուցումով հիմնաւորում է Կալիֆոռնիայի հայերի խնդրանքը, հաւաստիացնում, որ նրանք բնաւ նպատակ չունեն ստեղծելու հակառակորդ թեմ, այլ՝ ստեղծել համարժէք եւ կանոնական հաւասարութեամբ գործող կառոյց:

Վուստերի ժողովը միաձայն ընդունում է Վ. Քիւրքճեանի բերած փաստարկները՝ հարցի վերջնական տնօրինումը յանձնելով Վեհափառ Հայրապետին:

Կալիֆոռնիայի քայլերի վերաբերեալ Ամերիկահայոց թեմի՝ Վուստերի երեսփոխանական ժողովի արձանագրության տեքստը իր ժամանակին հրատարակել է Վարդան Ծ. Վրդ. Գասպարեանը «Էջմիածին» ամսաթերթում:

Վուստերի ժողովի արդիւնքն ամբողջովին դրական էր Կալիֆոռնիայի հայոց համար, ժողովը **«միաձայնությամբ համամիտ գտնուեցաւ, որ շուրջ երեք հազար մղոն հեռավորութեան վրայ գտնուող Քալիֆորնիոյ թեմերը առանձին առաջնորդութիւնը մը կազմեն»**³¹:

Այդ մասին Կալիֆոռնիայի հայերի ներկայացուցիչ Վահան Քիրքճեանը յատուկ գրութեամբ ծանուցում է Ատենապետ Ս. Մելքոնեանին եւ նշում, որ «երեսփոխանական ժողովը գրութիւններու ընթերցումէն եւ կարծիքներու փոխանակումէն յետոյ միաձայնությամբ քուէարկուեցաւ, որ գոհացում տրուի պատգամորական ժողովիդ փափաքին: Ըստ այդմ՝ երեսփոխանական ժողովը պաշտօնապէս պիտի հաղորդէ ձեզի որոշումը, եւ միեւնոյն ատեն պիտի խնդրէ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն, որ նկատելով այն արդարացուցիչ եւ ստիպողական պարագաները, զորս արդէն ներկայացուցած էք Ն. Ս. Օծութեան՝ իր հաւանութիւնը շնորհէ առանձին առաջնորդութիւն մը հաստատելու առաջարկին: Մնամ յարգանքով Վ. Ս. Քիրքճեան»³²:

9. 1918-ին յաջորդող տարիներ

Կալիֆոռնիայում առանձին առաջնորդութիւն ստեղծելու ընթացքն այս կետում կանգ է առնում եւ դեռ մէկ տասնամեակ մնում է չհանգուցալուծուած, չնայած որ Վուստերի երեսփոխանական ժողովը միաձայն համաձայնութիւն էր տուել առաջնորդութիւն հիմնադրելուն, Մայր Աթոռն էլ հակուած է եղել դրական ընթացք տալու Կալիֆոռնիայի հայերի փափագին:

Սակայն Հայաստանի անբարենպաստ պայմաններում Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը հազիւ թէ պատեհ ժամանակ կամ առիթ ունենար դրանով լրջօրէն զբաղուելու: 1920 թ. վերջին Հայաստանում հաստատուեցին խորհրդային կարգեր, եւ Հայոց Եկեղեցին արդէն իր իւրաքանչիւր քայլը պիտի համաձայնեցնէր Հայաստանի խորհրդային իշխանութիւնների հետ:

³¹ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 9, էջ 69:

³² Նոյն տեղում, էջ 68:

պիսկոպոսի հետ, եւ այդ որոշման հիմքը նրա դիրքերը տկարացնելն էր: Նման տեսակէտ է յայտնում Ա. Պարտիզեանն իր մեծածաւալ «Հայ Եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները» գրքում՝ նշելով, որ եթէ Տիրայր արքեպիսկոպոսը հրաժարական տուած լինէր 1927-ին, այլ ոչ թէ 1928-ին, ապա Կալիֆոռնիայի առաջնորդութիւն չէր ստեղծուի, քանի որ յաջորդ առաջնորդի՝ Ղեւոնդ Արք. Դուրեանի աթոռակալման շրջանում մտորում էին Կալիֆոռնիայի թեմը կրկին միացնել Արեւելեան թեմին³⁴:

Այս վարկածը մասամբ հիմք ունի. 1920-ական թթ. կէսերին անհամաձայնութիւն էր ծագել առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոս Տէր Յովհաննիսեանի եւ Կալիֆոռնիայի ծուխերի միջեւ³⁵: Ռիդլիի եւ Լոս Անջելէսի ծուխերը, չունենալով օծուած եկեղեցիներ, պատարագում էին **վէմ քարի** վրայ: 1924 թ. Տիրայր արքեպիսկոպոսը Բոստոնից հրահանգում է այդ ծուխերին դադարեցնել **վէմ քարի** օգտագործումը, որ վրդովմունք է առաջացնում: Դա երեւում է, օրինակ, 1924 թ. Ռիդլիի սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցու հոգաբարձութեան խորհրդի նամակից, ուղղուած ամերիկահայոց առաջնորդին, որ ստորագրել են հոգաբարձութեան խորհրդի ատենապետ Ս. Թիւդէլեանը եւ ատենադպիր Աւետիս Թովմաձանեանը, եւ որ հրապարակել է «Ասպարէզը»³⁶:

«Փարոս» պարբերականում կարդում ենք հակադիր տեսկէտը. «Քալիֆորնիոյ մէջ առաջնորդարանի հաստատութիւնը աշխարհագրական եւ տեղական պայմաններէ ծնած է եւ ազգային ու եկեղեցական զարգացման կարիքի մը արդիւնքն է: Այս ձեռնարկը ո՛չ Նիւ Եորքի առաջնորդարանին եւ ո՛չ ալ առաջնորդին անձին դէմ բողոք է, այլ գաղութային տեղական պէտքերու հետեւանք»³⁷:

Առանձին առաջնորդական թեմ ունենալու հասունացած եւ ձգձգուող հարցը վերջնական լուծելու համար 1927 թ. Կալիֆոռնիայի պատգամաւորական Ժողովը նախաձեռնութիւնը վերցնում է իր ձեռքը եւ ինքնուրոյնաբար գործում: Սեպտեմբերի 6-ին կայացած Ժողովը պարզապէս ընտրում է Կալիֆոռնիայի առաջնորդ եւ այդ մասին տեղեկագրում Մայր Աթոռին: Գրաւոր վկայութիւններ չունենք մեր ձեռքի տակ այն մասին, թէ որքանով է այդ քայլը համաձայնեցուած եղել Ս. Էջմիածնի եւ Նիւ Եորքի առաջ-

³⁴ Տե՛ս Պարտիզեան Ա., Հայ Եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները, Պոսթըն, 1936, էջ 275:

³⁵ Այս մասին է **Յասմիկ Եսայեանի** «Կալիֆոռնիայի թեմի հիմնադրման եւ գործունէութեան հարցի շուրջ (1920-1930-ական թթ.)» յօդուածը, «Էջմիածին» կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 2022, N Ե., էջ 66-85:

³⁶ «Ասպարէզ», Ֆրեզնո, 1924, N 1102, էջ 1:

³⁷ «Փարոս», Ֆրեզնո, 1928, N 4, էջ 76:

նորոգութեան հետ: Սակայն հարցն այնքան էր հասունացել, որ այս անգամ արագ լուծում է ստանում, եւ Ամենայն Հայոց Գեւորգ Ե. Սուրենեանց կաթողիկոսի (1911-1930) 1927 թ. նոյեմբերի 28-ի կոնդակով հաստատում է այդ որոշումը, և Գարեգին եպս. Խաչատուրեանը նշանակւում է առաջնորդ:

1928 թ. մայիսի 26-ին Ֆրեզնո է ժամանում Կալիֆոռնիայի հայոց թեմի անդրանիկ առաջնորդ Գարեգին եպս. Խաչատուրեանը (մինչ այդ՝ 1921-1928 թթ. առաջնորդ Տրապիզոնի թեմի): Սա պատմական պահ էր հայութեան համար. առաջնորդին դիմաւորելու էին գնացել հարիւրաւոր հայեր՝ մեծահասակ թէ մանուկ, եկեղեցական այրերի գլխաւորութեամբ: «Քալիֆորնիոյ Հայութեան անդրանիկ Առաջնորդ Գարեգին Եպիսկոպոս Խաչատուրեան քաղաքս ժամանեց անցեալ Շաբաթ օր, Մայիս 26-ին, Սանթա Ֆէ երկաթուղիով: Հարիւրաւոր հայեր՝ գլխաւորութեամբ եկեղեցական ներկայացուցիչներուն, դիմաւորութեան գացած էին կայարանը: Կառաւարը ճիշդ ժամանակին հասաւ կայարան: Անդրանիկ Առաջնորդը անմիջապէս առաջնորդուեցաւ քաղաքիս Ս. Երրորդութիւն եկեղեցին...»³⁸:

Յաջորդ օրը Գարեգին եպիսկոպոսը մատուցում է առաջին պատարագը հոծ բազմութեամբ լի Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցում՝ որպէս արդէն Կալիֆոռնիայի թեմի առաջնորդանիստ եկեղեցի:

³⁸ «Ասպարէզ», Ֆրեզնո, 1928, N 1304, էջ 1:

ՅԱԽԵԼՈՒԱԾ

Վաւերագիր 1.

Կալիֆոռնիայի Պատգամաւորական անդրանիկ ժողովի արձանագրութիւնը³⁹

Պատգամաւորական անդրանիկ ժողովի արձանագրութիւնը ներկայացնում ենք ամբողջութեամբ՝ քաղելով ԱՄՆ Արեւմտեան թեմի առաջնորդարանի արխիւից, «Արձանագրութեան տետրակ Կալիֆոռնիոյ Պատգամաւորական ժողովներու եւ Տնտեսական խորհրդոյ Հայոց Առաջնորդարանի Կալիֆոռնիոյ», Ֆրեզնո, 1917 Յունուար 28էն սկսեալ, էջ 1-4: Այն հրապարակուի է առաջին անգամ: Հարազատօրէն պահպանել ենք գրութեան ոճը եւ ուղղագրութիւնը:

Ատենագրութիւն Պատգամաւորական ժողովի Գալիֆորնիոյ
Հայոց եկեղեցւոյ

Նիստ Ա. 1917, Յունուար 28, Կիրակի

Պատգամաւորական ժողովոյս առաջին նիստը տեղի ունեցաւ Ֆրեզնոյի Սբ. Երրորդութիւն եկեղեցւոյ խորհրդարանին մէջ, Յունուար 28-ին, Կիրակի, կէսօրէն վերջը ժամը 3-ին, նախագահութեամբ Ֆրեզնոյի հոգեւոր հովիւ Գերշ. Վարդան Ծ. Վրդ. Գասպարեանի եւ ներկայութեամբ 11 պատգամաւորներուն, որք են.

Ֆրեզնոյէն – Տեարք Յակոբ Ներկեան, Դաւիթ Նշիկեան, Սրապիոն Մելքոնեան եւ Մկրտիչ Մ. Խօլլիկեան:

Ֆաուլըրէն – Ֆաուլըրի հոգեւոր հովիւ Արժ. Տէր Թէոթորոս Քահ. Իսահակեան, Տիարք Պետրոս Պոյաճեան եւ Գրիգոր Մանուկեան:

Եդէմէն – Տիարք Մելիք Սամրօեան, Միքայէլ Տերվիշեան եւ Յովաննէս Նազարէթեան:

Լոս Անձէլսէն – Տիար Ահարոն Պարթևեան:

Բացակայ էին Տիարք Հայկազ Էկինեան, Ֆրեդ Մինէեան, Շիմշօեան Ֆաուլըրէն, Մկրտիչ Սարիկեան եւ Գրիգոր Օհանեան Լոս Անձէլսէն:

³⁹ «Արձանագրութեան տետրակ Կալիֆոռնիոյ Պատգամաւորական ժողովներու եւ Տնտեսական խորհրդոյ Հայոց Առաջնորդարանի Կալիֆոռնիոյ, Ֆրեզնո, 1917 Յունուար 28էն սկսեալ», էջ 1-4:

Գաղատիոյ Առաջնորդ Գեր. Տ. Բաբկէն Եպս. Կիլիկիոյ եպիսկոպոսն ևս հրապարակեցաւ ներկայ գտնուիլ ժողովին նիստերուն:

Ժողովականներու խնդրանք Գեր. Բաբկէն Սրբազանը ժողովը վարեց մինչև դիւանի ընտրութիւն: Պատգամաւորներու ստորագրերը քննուեցան և օրինաւոր հռչակուեցան, ու յետոյ կատարուեցաւ դիւանի ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ: Նախ կատարուեցաւ Ատենապետի ընտրութիւնը և ընտրուեցաւ Յակոբ Աղա Նշիկեան, որ հրաժարուեցաւ և նոր քուէարկութեամբ Ատենապետ ընտրուեցաւ Տիար Սրապիոն Մելքոնեան:

Յետոյ կատարուեցաւ Ատենադպրի ընտրութիւնը և ընտրուեցաւ Տիար Յակոբ Նշիկեան, որ դարձեալ չընդունեց, երկրորդ անգամ քուէարկութիւն կատարուելով՝ Ատենադպիր ընտրուեցաւ Մկրտիչ Մ. Խօլլիկեան: Դիւանը օրինաւորապէս կազմուած ըլլալով՝ անցաւ իր պաշտօնին գլուխը և պատրաստեց օրակարգը հետևեալ կերպով.

Ա – Միացեալ Նահանգաց Արևմտեան նահանգներու համար առանձին առաջնորդութիւն մը հաստատելու խնդիրը պաշտօնապէս ներկայացնել ուր որ անկ է:

Բ – Պիտոճէի խնդիրը:

Գ – Երեսփոխաններու կամ պատգամաւորներու թիւին ճշդումը Քալիֆօռնիոյ Հայոց համեմատութեամբ:

Բոլոր պատգամաւորները, իրենց ներկայացուցած եկեղեցիներուն կողմէն, ուրախութիւն յայտնեցին առանձին առաջնորդութիւն մը հաստատելու ծրագրին համար (ընդգծումը մերն է – Ն.Պ.), երբ Ատենապետը առաջարկեց նկատի առնել խնդիրն կարևորութիւնը:

Կարծիքներու փոխանակութենէն ետքը որոշուեցաւ երկու գրութիւն պատրաստել:

Առաջինը ուղղուեալ Հայոց Ս. Կաթողիկոսին Էջմիածին, որով պիտի բացատրուին այն բոլոր պատճառները և պէտքերը, որ անհրաժեշտ կ'ընեն Գալիֆօռնիոյ մէջ Արևմտեան նահանգներու համար Առաջնորդութեան մը հաստատութիւնը:

Երկրորդը ուղղեալ Ամերիկայի Հայոց Առաջնորդին, Ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսին ուղղեալ գրութեան հետ, որպէսզի Առաջնորդը կարգաւ զայն և իր կողմէն ալ ոյժ տալով հասցնէ Վեհ. Հայրապետին խնդիրը, ապահովագրեալ ծրարով: Որոշուեցաւ նաև այս խնդիրը տեղեկագրել Քալիֆօռնիոյ Երեսփոխաններուն, որպէսզի երեսփոխանական ժողովին մէջ ի հարկին խօսին այս մասին:

Այս օրինաւոր քայլերը առնելէ ետքը որոշուեցաւ սպասել արդիւնքին և երբ դժուարութիւններ ծագին, զանոնք հարթելու համար դարձեալ օրինաւորութեան սահմանին մէջ տիրապետել խնդիրը, մինչև որ յաջողի և մինչ իսկ եթէ հարկ ըլլայ, Կովկասէն պատգամաւորներ որոշել, որպէսզի նորին վեհափառութեան քով խնդիրը պարզեն և յաջողցնեն:

Ժամանակը անցած ըլլալով որոշուեցաւ յաջորդ նիստը ընել փետ. 11 կիրակի կէսօրէն վերջը ժամը 2ին, Սբ. Երրորդութիւն եկեղեցւոյ խորհրդարանին մէջ և նկատի առնել օրակարգին միւս խնդիրները: Պատգամաւորները խոստացան առանց հրաւիրագրերու ձիշտ ժամանակին ներկայ գտնուիլ: Ժողովը փակուեցաւ ժամը 5.20:

Ատենադպիր Մկրտիչ Մ. Խօլլիկեան

Ատենապետ Ս. Վ. Մելքոնեան:

Վաւերագիր 2.

Կալիֆօռնիայի հայերի 1917 փետրուարի 11-ի
խնդրագիրը Ամենայն Հայոց կաթողիկոսին⁴⁰

Խնդրագիրը պարունակում է մի շարք կարեւոր նկատառումներ ամերիկահայ նոր ձեւաւորուող ու ստուարացող հայ համայնքի մասին: Այն շարունակաբար հրապարակուել է Ֆրեզնոյի «Էջմիածին» ամսաթերթում, որից քաղել ենք մենք եւ երկար այս խնդրագիրը հրապարակում ենք մասնակի կրճատումներով:

ՊԱՏՃԷՆ ԽՆԴՐԱԳՐԻՆ

Ֆրեզնո, Քալիֆօռնիա, 11 Փետր. 1917

Վեհափառ Տ. Տ. Գէորգ Ս. Կաթողիկոս Ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին

Վեհափառ Հայրապետ,

Ամերիկայի Միացեալ Նահանգները, արեւելքէն արեւմուտք, հեռի են հազարաւոր մղոններով, և այս նահանգներու մէջ է, որ ցրուած են Հայոց գաղութներ:

⁴⁰ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 6, էջ 41-43, N 7, էջ 50-52:

Մենք, Քալիֆորնիոյ Հայերս, կը գտնուինք Արևմտեան նահանգներու ծայրագունին վրայ, և հետևաբար երեք հազար հինգ հարիւր մղոն հեռի կը գտնուինք Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան կեդրոնէն:

Քալիֆորնիոյ հայ գաղթականութեան ծագումը կլոր թուականով մը սկսած է ասկէ երեսուն տարի առաջ, Ֆրէզնոյի մէջ շատ աննշան թուով: Բայց Հայ ժողովուրդը, որ կը սիրէ հողագործութիւնը, հետզհետէ աճած և բազմացած է այս նահանգի մէջ ուշագրաւ համեմատութեամբ: Այսպէս, ասկէ քսան տարի առաջ Ֆրէզնոյի և շրջակայից մէջ երեք հարիւր և վաթսուն հինգ հոգի կային, իսկ այսօր՝ այդ թիւը քառասուն անգամ և քիչ մըն ալ աւելի բազմապատկուած է, և այս բազմապատկեալ հայոց մեծամասնութիւնը ժողովուրդ է Հայց. եկեղեցւոյ:

Քալիֆորնիոյ մէջ Հայերը ոչ միայն գաղթականութեամբ շատցած են, այլ և կը շատնան ծննդեամբ, այնպէս որ բնիկ ամերիկացի հայ սերունդ մը կայ այսօր այս երկրին մէջ: Դարձեալ Քալիֆորնիոյ հայերը, շնորհիւ իրենց հողագործութեան, տոկոսութեան և ժրութեան, հողատէր և տանուտէր եղած են, այսինքն տեղաւորուած են այս նահանգին մէջ: Մերձաւորապէս քսան հազար էյքր կոշտ կամ կիսամշակ հողեր հայոց աշխատանքով ու քրտինքով մշակուած ու դրախտի վերածուել է Սան Ուոգին (San Joaquin-Ն.Պ.) հովտին մէջ, կեդրոն ունենալով Ֆրէզնո քաղաքը, որ միանգամայն կեդրոնն է Քալիֆորնիա նահանգին, և որ՝ իր կարգին արագ արագ կը շէնսայ և կը մեծնայ:

Քալիֆորնիոյ Հայերը ստոյգ ջանքեր ըրած են և կ'ընեն, պահելու համար իրենց մայրենի եկեղեցին, մայրենի լեզուն և Հայրենի կեանքը: Եւ ասոր համար շինած են եկեղեցիներ: Ֆրէզնո, որ Քալիֆորնիոյ Հայ գաղութին ալ կեդրոնն է և մայրը, ունեցած է իր առաջին եկեղեցին (1902-1913), որ հրդեհուեցաւ, և Հայք աւելի փառաւորը շինեցին իրենց Մայր եկեղեցին (1914): Նոյնպէս Ֆալլըր և Եդեմ ունին իրենց եկեղեցւոյ շէնքերը: Բիտլի ձեռնարկած է ունենալ իրեն եկեղեցւոյ շէնքը, իսկ Լոս Անճէլըսի և Սան Ֆրանսիսկոյի Հայերը Եպիսկոպոսանաց եկեղեցիներու մէջ կը կատարեն իրենց պաշտամունքը: Կան նաև Հայեր Սէլմա, Տէլ Ռէյ, Փարլիէր, Քինկզպրկ, Մալակա, Քլօվիս, Սանկըր, Հէնֆըրտ, Թուլարա և այլ տեղեր, որոնցմէ ոմանց ժողովուրդը կուգան Ֆրէզնոյի կամ Ֆալլըրի եկեղեցիները, ոմանք շատ քիչ անգամ եկեղեցի կը տեսնեն, ոմանք ալ օտար եկեղեցիներ կ'երթան: Իսկ կան Հայ գաղութներ, ինչպէս Թէքսազ նահանգին մէջ, որ գուրկ են կրօնական և ազգային ամեն տեսակ միսիթարութեմէ:

Քալիֆորնիոյ Հայեր ունին նաև իրենց յատուկ Հայ դպրոցներ, ուր հայերէն գրել կարդալ կը սորվին մանուկ և պատանի Հայեր, աղջիկ թէ մանչ, Ամերիկեան վարժարաններէն աւելցած իրենց ժամերուն մէջ: Ունին նոյնպէս Հայ գրադարաններ աւելի հասուններուն և առ հասարակ բոլոր Հայոց համար, և այս դպրոցներ ու գրադարաններ՝ ընդ հովանեաւ Հայց. Եկեղեցւոյ:

Այս համառօտ ուրուագիծը Քալիֆորնիոյ Հայոց վիճակին նկատմամբ, ցոյց կուտայ, թէ այս նահանգի մէջ Հայութիւն մը կայ, որ անհրաժեշտ պէտք ունի կազմակերպուելու առանձին առաջնորդութեան մը վարչութեամբ, ուղղակի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեանդ իրաւասութեան և իշխանութեան ներքև:

Այս պէտքը շատոնց զգալի եղած է թէ՛ Քալիֆորնիոյ Հայոց մէջ և թէ՛ Քալիֆորնիայէն դուրս. Ամերիկայի Հայ գաղութին կազմակերպութեան և պահպանման խնդրին հետ հետաքրքրուող շրջանակներու մէջ: Այնպէս որ այս մասին խորհրդակցութիւններ եղած են հանգուցեալ Սարաճեան Սրբազանի ատեն, և ետքը Ձեր Վեհափառութեան լիազօր ներկայացուցիչ՝ Գեր. Տ. Գէորգ Արքեպիսկոպոս երբ Ամերիկայ եկաւ առաջնորդական խնդիրները կարգադրելու համար, այդ առթիւ ալ Նորին Գերապատուութեան ուշադրութեան յանձնուած է Ամերիկայի մէջ մէկէ աւելի առաջնորդութիւն հաստատելու խնդիրը, Ֆրէզնոյի հովիւ Տ. Վարդան Ծ. Վարդապետ Գասպարեանի կողմէն տրուած տեղեկագրին մէջ (1913 Սեպտ. 16):

Բայց այս բոլորը արդիւնաւոր ձևի մը մէջ չդրուեցան մինչև հիմայ, և այս պատճառով Քալիֆորնիոյ և առ հասարակ բոլոր արևմտեան նահանգաց Հայ գաղութները մեծապէս տուժեցին և կը տուժեն միշտ:

Եւ որպէսզի մեր գաղութներուն կրած վնասները վերջ գտնեն՝ առանձին առաջնորդութեան մը հաստատութեամբ, պարտք կը համարինք խոնարհաբար Ձեր Վեհափառութեան ուշադրութիւնը հրաւիրել քանի մը գլխաւոր իրողութիւններու վրայ:

Ա.– Ամերիկեան դրամով և ծրագրով զօրաւոր փրօփականտ մը կը մղուի անհովիւ և անկազմակերպ Հայաստանեայց Եկեղեցւոյ ժողովուրդը որսալու համար: Օտար և յարանուանական եկեղեցիներ դուրս ու դադար չունին: Ասոնց քարոզիչներն ու գործիչները կը հրապուրեն ու կը հրաւիրեն մեր եկեղեցւոյ զաւակները իրենց եկեղեցին:

Արդ՝ եթէ առանձին Առաջնորդութիւն մը ունենանք, պիտի կազմակերպուին մեր ցրուեալ գաղութներուն եկեղեցական և կրթական գործերը, մօտէն հսկողութիւն պիտի կատարուի և կարելի եղած միջոցնե-

ըը պիտի ստեղծուին մեր ժողովուրդը բռնելու և օտար փրօփական-տին առջև առնելու համար:

Բ.- Մեր եկեղեցիներուն և ժողովրդեան հոգևոր պէտքերը հոգալու համար կարօտը կը քաշենք յարմարագոյն հոգևորականներու:

Արդ՝ եթէ առանձին առաջնորդութիւն մը ունենանք, ան պիտի կրնայ պարտ ու պատշաճ տնօրինութիւնները ընել տեղւոյն վրայ: Ամերիկայի Հայ եկեղեցիներուն յատուկ և յարմար հոգևորականներու պատրաստութիւնը ամենակենսական խնդիր մըն է, որուն լուծումը առաջնորդութիւնը միայն պիտի կրնայ տալ:

Գ.- Ամերիկայի մէջ նորիս սերունդին կրօնական և ազգային կրթութեան գործը կայ: Գիտէ Ձեր Վեհափառութիւնը, որ Ամերիկայի մէջ Կիրակնօրեայ դպրոցներ կան, և բոլոր Ամերիկացի մանուկներ պատրաստ են այդ դպրոցները երթալ և ստանալ իրենց կրօնական կրթութիւնը, վասն զի քաղաքային դպրոցներու մէջ կրօնական դասեր չկան: Արևելեան նահանգներու մէջ Հայ փոքրիկներ կերթան Ամերիկեան կիրակնօրեայ դպրոցներ և կառնեն կրօնական կրթութիւն, որ բողոքական է առ հասարակ: Իսկ Քալիֆօրնիոյ մէջ Հայեր ջանքեր ըրած են հաստատել Հայ Կիրակնօրեայ Դպրոցներ, որպէս զի Հայ փոքրիկներ և պատանիներ Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնական կրթութիւնը առնեն:

Արդ՝ առանձին առաջնորդութիւն մը միայն կարող պիտի ըլլայ կազմակերպել պէտք եղածին պէս այս դպրոցները, հսկել անոնց վրայ և արդիւնաւորել:

Դ.- Ունեցած ենք, ունինք և անշուշտ պիտի ունենանք այս երկրին ազատութենէն և օրէնքներէն ազդուած ամուսնական բարդ խնդիրներ, որոնք տեղւոյն վրայ ստիպողաբար և անմիջական կերպով կարգադրուելու պէտք ունին ձեռնհաս հոգևոր իշխանութեան կողմէն: Կարելի չէ այսպիսի խնդիրներու լուծման և կարգադրութեան համար դիմել հազարաւոր մղոններով հեռու Վուստերի առաջնորդարանը և սպասել ընդ երկար, որ կարգադրութիւններ ըլլան:

Արդ՝ առանձին առաջնորդութիւնը շատ դիւրութեամբ պիտի հոգայ ամուսնական խնդիրներու մասին և տեղւոյն վրայ, իրազէկ անոնց բոլոր հանգամանքներուն, և պիտի կարգադրէ ինչ որ արժան է և պատուաբեր Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայ ընտանեկան և ընկերական կեանքի համար:

Ե.- Հայ գաղութը Ամերիկայի մէջ կը ներկայացնէ սովորոյթներու և բարքերու պէսպիսութիւն մը, բնաշխարհի իւրաքանչիւր քաղաքին և

գիւղին համեմատ: Այդ բոլորը աններդաշնակութիւն մը երևան կը բերեն Ամերիկեան միջավայրին մէջ, նշանտուքներու, հարսնիքներու, կնունքներու առթիւ և այլն, և անպատշաճ ու շատ անգամ անպատուաբեր մեր եկեղեցոյն և ազգին անուան:

Արդ՝ որպէս զի այս երկրին պատշաճ և Հայաստանեայց եկեղեցոյ ու ազգային սովորութեանց և ոգւոյն համեմատ կարգ ու կանոնի տակ առնուին այսպիսի բաներ և օրինադրուին, հարկ է որ ունենանք մեր առանձին առաջնորդութիւնը, ամեն ինչ իր միջավայրին մէջ քննելու և ըստ այնմ պարտ ու պատշաճ կարգեր ու կանոններ հաստատելու համար:

Զ.- Քալիֆօրնիոյ Հայ գաղութին մեծագոյն մասը ինչպէս ըսինք հողատէր դարձած է կամ այգետէր ըստ կարի: Բայց պէտք է կարծել որ այգետէր Հայեր քաղաքի կամ գիւղի մէջ համախմբեալ բնակութիւն մը ունին, ո՛չ: Առ հասարակ ամեն այգետէր իր տունը շինած է իր այգիին մէջ. այսպէս՝ կէս մղոնէն մինչև քսան և ասելի մղոններ հեռու են իրարմէ Հայ տունէր: Ֆրէզնոյէն դուրս բոլոր գաղութներ այսպէս ցրուած են Սան Ուոգին հովիտին մէջ: Ֆրէզնոյի անմիջական շրջակայքը կըսուի Կոլոնի (գաղութ կամ գաղթավայր) ցրուեալ այլ և այլ հեռաւորութեամբ: Ֆալլըր, Եդեմ, Սէլմա, ևն այսպէս ցրուած են, և այս ցրուեալ վիճակը կը դժուարացնէ Հայ այգեգործներուն հոգևոր և ազգային և այլ խնամքը, և կը պահանջէ իմաստուն և հնարաւոր կարգադրութիւններ:

Արդ, առանձին առաջնորդութիւնը պիտի տեսնէ այս վիճակը տեղւոյն վրայ և հոգ պիտի տանի ընել ինչ որ կարելի է այս ցրուեալ Հայութիւնը պահպանելու համար:

Անշո՛ւշտ, Վեհ. Տէր, պատերազմէն ետքը, երբ աշխարհ խաղաղի, և մանաւանդ երբ բնաշխարհին մէջ Հայ ազգին համար ստեղծուի և ապահովուի քաջալերիչ կացութիւն մը, երկիր պիտի վերադառնան այն Հայեր, որ հաստատուն գործ չունին Ամերիկայի մէջ, այսինքն անոնք որ գործաւորներ են ընդհանրապէս, և ասոնք Միացեալ Նահանգաց միջին և արևելեան շրջանակներուն մէջ կը գտնուին առ հասարակ: Իսկ անոնք, որ դիրք շինած են, վաճառական են, հողատէր և տանուտէր են, մանաւանդ Ամերիկայի մէջ ծնած ու հասած սերունդը դժուար է, որ վերադառնան երկիր: Ասիկա շատ յայտնի է գրեթէ Քալիֆօրնիոյ համար: Եւ դարձեալ ասիկա բնական երևոյթ մըն է Հայ գաղութականութեանց պատմութեան մէջ ևս:

Կ'արժէ նաև գիտել, որ Քալիֆօրնիոյ Հայութիւնը հետզհետէ կը տեղաւորուի, կը զօրանայ և կը ստուարանայ: Հայեր ջանադիր են նոր

հողեր գնել և ընդարձակել իրենց կալուածները: Ուշագրաւ է նաև արեւելեան նահանգներէն եկող Հայոց թիւը, որոնք կուգան հողատէր ըլլալու համար այս կողմերը:

Մենք կը հաւատանք և կը հաստատենք, որ Ամերիկայի Միացեալ Նահանգները, թէ պատերազմէն ետքը և թէ ամեն ժամանակ, ինչպէս շատ մը ազգերու և ժողովուրդներու, նոյնպէս Հայոց համար պիտի մնայ նշանաւոր գաղթավայր մը, այնպէս որ վաղը, եթէ վերադարձողներ ըլլան, անոր փոխարէն նոր գաղթողներ ալ պիտի գտնուին: Հետևաբար **Ամերիկայի հին և նոր Հայութիւնը պահելու և պահպանելու համար անհրաժեշտ է առաջնորդական լաւ կազմակերպութիւն** (ընդգծումը – Ն.Պ.), և այս անհրաժեշտութիւնը մանաւանդ անյետաձգելի է Քալիֆորնիոյ կամ արեւմտեան նահանգաց համար:

Վստահ ենք, Վեհափառ և Ս. Հայրապետ մեր, որ Հայրական գործով պիտի ընդունիք մեր խնդրուածքը, և պիտի քաջալերէք Ձեր հարազատ զաւակները իրենց ձեռնարկին և ծրագրին յաջողութեան մէջ, շնորհելով արտօնութիւնը առանձին առաջնորդութեան մը հաստատութեան և օրհնելով մեզ:

Այս վստահութեամբ կը մատչիմք որդիական խորին ակնածանօք ի համբոյր Օծեալ աջին և Ս. Խաչին Վեհափառութեանդ:

Ի դիմաց Քալիֆորնիոյ Հայոց Առաջնորդութեան Պատգամաւորական Ժողովոյ

Նախագահ Վարդան Ծ. Վարդ. Գասպարեան
Հոգեւոր Հովիւ Ֆաւրրի Թէոդորոս Քահ. Իսահակեան
Ատենապետ Ս. Վ. Մելքոնեան
Ատենադպիր Մկրտիչ Խօլիկեան:

Վաւերագիր 3.

Կալիֆորնիայի հայերի 1917 թ. փետրուարի 11-ի տեղեկագիր-խնդրագիրը՝ ուղղուած Ամերիկահայոց հոգեւոր առաջնորդին⁴¹

«Գերապատիւ Տ. Արսէն Ծ. Վ. Վեհունի, Առաջնորդ Հայոց Ամերիկայի, յՎուստեր

Քալիֆորնիա նահանգի կամ առհասարակ Արեւմտեան նահանգներու մէջ ցրուած Հայ գաղութին վիճակը ծանօթ է ձեզի: Այս կողմերու Հայք հետզհետէ տեղաւորուելու և շատնալու վրայ են, այնպէս որ անոնց կրօ-

⁴¹ «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 8, էջ 60-61:

նական, կրթական, ազգային և այլ պետքերն ալ նոյն համեմատութեամբ սկսած են շատնալ, որոնց խղճամիտ խնամածութիւնն ու հոգացողութիւնը կը պահանջեն անմիջական հսկողութիւն և կարգադրութիւն տեղւոյն վրայ:

Այս պետքերն ու պահանջները շատոնց զգալի ըրած էին առանձին առաջնորդութեան մը հաստատութիւնը Քալիֆօրնիոյ մէջ, և վստահ ենք որ Ձեր Գերապատութիւնն ալ փորձառաբար գնահատած է այս կողմերու Հայոց բացառիկ պայմանները, թէ ո՛րչափ դժուար է 3500 մղոն հեռաւորութենէ մը ստանձնել անոնց առաջնորդելու պատասխանատուութիւնը:

Քալիֆօրնիոյ հայերը նկատի առնելով իրաց վիճակը, իրենց ազգային և եկեղեցական ինքնուրոյնութեան պահպանութիւնը ապահովելու նախանձախնդրութեամբ, որոշեցին ի գործ դնել իրենց վաղեմի ծրագիրը, հաստատելով իրենց առաջնորդութիւնը ուղղակի Մայր Աթոռոյ իրաւատութեան ներքև:

Եվ որովհետև Քալիֆօրնիոյ Հայոց փափաքին իրականացումը և ծրագրին յաջողութեամբ պսակումը կախուած է Ն. Ս. Օծութեան Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին հաճութենէն և վաւերացումէն, պարտք համարեցինք Նորին Վեհափառութեան Հայրապետական գահոյից առջև դնել մեր խնդիրքը և այս նպատակաւ խմբագրեցինք ներփակեալ պաշտօնագիրը մեր Պատգամաւորական Ժողովին մէջ, և որոշեցինք նոյն պաշտօնագիրը դրկել Ձեր Գերապատութեան, որպէս զի բարեհաճիք կարդալ զայն, տեղեկանալ անոր բովանդակութեան և ապա հասցունել զայն Ն. Ս. Օծութեան ձեռքը, առանց յապաղման, ապահովագրեալ ծրարով, և ոյժ տալով մեր խնդրանքին կատարման,– ընդունիլ մեր անկեղծ շնորհակալութիւնները՝ Ձեր սիրայօժար միջնորդութեան համար:

Վստահ ենք որ Ձեր Գերապատութիւնը պիտի բարեհաճի ըստ ամենայնի թարգման հանդիսանալ մեր Վեհ. Հայրապետին մօտ՝ մեր որդիական խորին զգացումներուն և շեշտել մեր խնդիրքը գնահատելով անոր կարևորութիւնը:

Շատ երախտապարտ պիտի մնանք Ձեր Գերապատութեան, եթէ հաճիք մեզ իմացնել, թէ մեր առ Ն. Ս. Օծութեան ուղղեալ ներփակ պաշտօնագիրն յանձնուած է նամակատուն ապահովագրեալ ծրարով:

Մնամք խորին յարգանքօք՝

Անդամք Պատգամաւորական Ժողովոյ Քալիֆօրնիոյ Հայց. եկեղեցւոյ
Ատենապետ՝ Ս. Վ. Մելքոնեան

Ատենադպիր՝ Մ. Խոլլիկեանը

1917 Փետր. 11:

Վաւերագիր 4.

Մայր Աթոռ Ս.Էջմիածնի Դիւանատան պատասխանը
Կալիֆոռնիայի հայոց խնդրագրին⁴²

«20 Յունիսի 1917 ամի, ի Ս. Էջմիածին:

Ամերիկայի Կեդրոնական վարչութեան կրօնական ժողովի նախագահ գեր. Տ. Արսէն Ծ. Վարդապետին:

Կալիֆոռնիոյ մէջ առանձին առաջնորդութիւն հաստատելու նկատմամբ կրօնական ժողովիդ տարույս Մարտ 3 թիւ 8-292 գրութիւնն, ինչպէս եւ Կալիֆոռնիայի հայոց եկեղեցիների պատգամաւորական ժողովի փետրուարի 11-ի հեռագիրն ստանալով՝ հայրապետական Դիւանս մանրամասն գեկոյց Նորին Սրբութեան խնդիրը:

Նորին Վեհափառութիւնն ի նկատի առնելով յարուցուած խնդրի կարեւորութիւնը, որով Ամերիկահայ հօտի կեանքի մէջ էական փոփոխութիւն է յառաջ բերում ըստ վարչական կազմութեան, բարեհաճեց կարգադրել այս նկատմամբ.

Ա. Յանձնարարել կրօնական ժողովիդ այս խնդիրն ամբողջութեամբ դնել Երեսփոխանական ժողովի սեղանի վրայ:

Բ. Քննութեան առնել խնդիրը իւր յարակից բոլոր պարագաներով, ըստ վարչականին, ըստ բարոյականին եւ ըստ տնտեսականին:

Գ. Երեսփոխանական ժողովի եզրակացութիւնը Ձեր կարծիքի հետ ներկայացնել Նորին Ս. Օծութեան ի վերջնական տնօրինութիւն եւ ի հաստատութիւն:

Աչքի առաջ ունենալով խնդրի կարեւորութիւնը՝ Երեսփոխանական ժողովի քննութեան նիստին հրաւիրել նաեւ Կալիֆոռնիայի հայ եկեղեցիների պատգամաւորների ներկայացուցիչներին՝ ի պաշտպանութիւն եւ ի բացատրութիւն յարուցուած խնդրի այլ եւ այլ պարագաների»:

Վաւերագիր 5.

Ամերիկահայոց թեմի Երեսփոխանական ժողովի որոշումը⁴³

«Արձանագրութիւն հայոց ազգային երեսփոխանական ժողովի
1918 թ. ապրիլի 7-8, Բոստոն

⁴² «Էջմիածին», Ֆրեզնո, 1918, N 9, էջ 68-69:

⁴³ Նոյն տեղում, էջ 69:

Նորին Ս. Օծուխինը Քալիֆոռնիոյ հայ գաղութին փափաքը նկատի առած եւ 1917 յունիս 20 թուակիր եւ 1090 համարաւ դիւանական պաշտօնագրով երեսփոխանական ժողովիս յանձնած էր խնդիրը բարոյական, վարչական եւ տնտեսական տեսակէտներէ ուսումնասիրել եւ արդիւնքը տեղեկագրել Ս. Էջմիածին՝ վերջնական տնօրինութեան համար: Միեւնոյն ժամանակ յանձնարարած էր, որ Քալիֆոռնիոյ կողմէն յատուկ պատգամաւոր մը ներկայ գտնուի երեսփոխանական ժողովոյդ նոյն նիստին եւ պարզէ առանձին առաջնորդութիւն մը հաստատելու պէտքերն ու անհրաժեշտութիւնը:

Ֆրէզնոյի երեսփոխան եւ Քալիֆոռնիոյ մասնաւոր պատգամաւոր Տիար Վահան Քիւրքճեան խօսք առաւ եւ կարդաց այն ընդարձակ պաշտօնագիրը, որ Քալիֆոռնիոյ թեմերուն կողմէ ուղղուած էր Վեհ. Հայրապետին: Յետոյ թուեց այն օգուտները, որ յառաջ պիտի գային առանձին առաջնորդութիւն մը հաստատումէն:

Ժողովը նկատի ունենալով Քալիֆոռնիայի հայոց ընդհանուր բաղձանքը եւ առանձին առաջնորդութեան համար հարկ եղած բարոյական եւ նիւթական զոհողութեանց յանձնառութիւնները՝ միաձայնութեամբ համաձայն գտնուեցաւ, որ շուրջ երեք հազար մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Քալիֆոռնիոյ թեմերը առանձին առաջնորդութիւնը մը կազմեն եւ որոշեց ըստ այնմ տեղեկագրել Վեհ. Հայրապետին»:

Նորայր Բ. Պօղոսեան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզուի պատմութեան, այդ թւում՝ գրաբարի, հայերէնի բարբառների ուսումնասիրութեան, աշխարհաբարի ձեւաւորման հարցերը, հայոց տեղանունագիտութիւնը: Հրապարակել է 15 մենագրութիւններ, «Ոսկեղենիկ» մատենաշարի 8 հատորները, 80-ից ատելի գիտական յօդուածներ: Վերջին շրջանում զբաղւում է նաեւ ամերիկահայ գաղթավայրի ձեւաւորման պատմութեան, արտաշխարհի հայութեան ինքնութեան վերափոխումների քննութեան հարցերով:

Էլ. հասցե՝ inorayr@yahoo.com

HISTORY OF THE FOUNDATION OF THE WESTERN DIOCESE OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE USA

Based on Handwritten Documents

Norayr B. Poghosyan

Ph.D in Philological Sciences

Key words – Armenian community, American Armenian Diocese, California, Diocesan Assembly, Fresno, minutes of meetings, arguments, new diocese.

The Diocese of the Armenian Apostolic Church in America was founded in 1898. On this occasion, the Catholicos of All Armenians, Mkrtich A. Khrimyan, mentioned in his “Kondak” that “the free flow of Armenians has not yet reached far to America, but in recent years this place has also been filled with Armenians. Therefore, it is necessary to have an independent diocesan organization.”

At the beginning of the 20th century, the number of Armenians increased in the western states of the USA, primarily in California. Influenced by various factors within this growing and economically developing community, the idea of creating a separate diocese gradually gained momentum. The Western Diocese of America was officially founded in 1927.

This publication recounts the first meetings, programs, and other foundational steps of the diocese to highlight the path the Western Diocese took during two to three decades before its formal establishment. This article is based on handwritten documents of the Western Diocese and press publications from the 1900s–1920s.

Among these documents, the protocol of the first deputy assembly holds great historical and significant importance. The protocol notebook measures 22x32 cm, has 140 pages, and is written in fine handwriting. This document is an important testimony to the formation of the Armenian community and church in California.

Another document is a letter from the Armenians of California to the Armenian Catholicos, in which six points outline the arguments for establishing a new diocese. These points can be briefly formulated as follows: the Armenians of California seek to have an independent diocese in order to:

- a) stop the "hunt" by missionaries of foreign and wealthy churches,
- b) have the opportunity to train clergy,
- c) manage the establishment of schools,

- d) resolve complex marital issues,
- e) clarify rules consistent with the traditions of the Armenian Church and national customs,
- f) unite the dispersed Armenians of the colony.

The protocol notebook is preserved in the office of the Western Diocese of the Armenian Apostolic Church in the USA, which we accessed with the permission of Primate Archbishop Hovnan Derderian. The documents are being published for the first time.

Резюме

ИСТОРИЯ ОСНОВАНИЯ ЗАПАДНОЙ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В США

На основании рукописных документов

Норайр Б. Погосян

Канд. филол. наук

Ключевые слова – армянская община, Американская армянская епархия, Калифорния, епархиальное собрание, Фрезно, протокол заседаний, аргументы, новая епархия.

Епархия Армянской Апостольской Церкви в Америке была основана в 1898 г. По этому поводу Католикос Всех Армян Мкртич А. Хримян в своем «Кондаке» упоминает, что «свободный поток армян еще не достиг Дальней Америки, но в последние годы и это место заселили армяне, и в связи с этим, необходимо иметь самостоятельную епархиальную организацию».

В начале XX в. увеличилась численность армян в западных штатах США, прежде всего в Калифорнии. Под влиянием многих факторов растущей и экономически развивающейся общины, постепенно назревал вопрос о создании отдельной епархии. Западная епархия в Америке была основана в 1927 г.

В данной публикации рассказывается о первых собраниях, программах и других шагах во время основания епархии, чтобы показать путь, который прошла Западная епархия за 20-30 лет до своего официального учреждения. Статья написана на основе рукописных документов Западной епархии и публикаций прессы за 1900-1920 гг.

Среди этих документов очень важное значение имеют протоколы первых депутатских собраний. Тетрадь этих протоколов имеет размер 22х32 см, 140

страниц, написанных мелким почерком. Этот документ является важным свидетельством формирования армянской общины и церкви в Калифорнии.

Другим документом является письмо армян Калифорнии к армянскому католикусу, в котором в шести пунктах излагаются аргументы для основания новой епархии. Эти пункты можно кратко сформулировать следующим образом: армяне Калифорнии стремятся иметь самостоятельную епархию, чтобы:

- а) остановить «охоту» проповедников иностранных и богатых церквей,
- б) иметь возможность готовить кадры для духовенства,
- в) управлять созданием школ,
- г) решать сложные брачные вопросы среди армян,
- д) уточнять правила, соответствующие традициям армянской церкви и национальным обычаям,
- е) объединить разбросанные колонии армян.

Тетрадь протоколов хранится в офисе Западной епархии Армянской Апостольской церкви США. Мы пользовались ею с разрешения Архиепископа Овнана Дердеряна. Документы публикуются впервые.

Օգտագործուած գրականութիւն

1. **Ասազեան Ք.**, Ամերիկայի Միացեալ Նահանգների հայ գաղութի պատմութիւնը (Սկզբնաւորումից մինչև 1924 թ.), Եր., 2000:
2. **Եսայեան Յ.**, Կալիֆոռնիայի թեմի հիմնադրման եւ գործունէութեան հարցի շուրջ (1920–1930–ական), «Էջմիածին», 2022, թիւ Եր. , էջ 66–85:
3. Հայ համայնքն ԱՄՆ–ում, «Նորավանք», Եր. , 2010:
4. Պատմութիւն Արեւմտեան թեմի. 80 տարիներու ծառայութիւն, Բըրբանկ–Կալիֆոռնիա, 2008:
5. Սահմանադրութիւն Հոգեւոր կառավարութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ Առաջնորդական վիճակին Ամերիկայի, Վենետիկ, 1903:
6. Օրացոյց Հայաստանեայց եկեղեցոյց Ամերիկայի 1921. Պատկերազարդ եւ յաւելումներով», Բոստոն, 1920:
7. **Avakian Arra S.**, The Armenians in America, Minneapolis, 1977.
8. **Bakalian Anny**, Armenian-Americans: From Being to Feeling Armenian, New Brunswick, 1993.
9. **Kravitz Danny**, Journey to America: A chronology of Immigration in the 1900s. North Mankato, MN, 2016:
10. **Mahakian Charles**, History of the Armenians in California, San Francisco, 1935.
11. Memory Fragments from the Armenian Genocide: A Mosaic of a Shared Heritage, New York, 2002.
12. Mirak R. Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War 1. Cambridge, 1983.
13. **Tololyan Khachig**, The Role of the Armenian Apostolic Church in the Diaspora, “Armenian Review” volume 41, Boston 1988.

14. **Wertsman Vladimir.** The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book, New York, 1978:
15. **Zakian Christopher Hagop, ed.** The Torch was Passed. The Centennial History of the Armenian Church of America, New York, 1998, p. 163-177.

REFERENCES

1. **Avagyan Qnarik,** Amrikayi Miats'yal Nahangneri hay gaghut'i patmut'yunē, (skzbnavorumits' minchev 1924 t.), Yerevan, 2000 **(In Armenian).**
2. **Yesayan Hasmik,** Kaliforniayi t'emi himnadrman ew goruneut'yan harci shutj (1920-1930-akan t'), «Etchmiadzin», 2022, 66-85 **(In Armenian).**
3. Hay hamaynqē AMN-um, «Noravanaq», Yerevan, 2010 **(In Armenian).**
4. Patmut'yun Arevmtyan t'emi. 80 tarineru tcarayut'yun, Burbank-California, 2008 **(In Armenian).**
5. Sahmanadrutyun hovevor karavarut'yan Hayastaneayts' S. Yekeghets'woy Arajnordanan vijakin Amerikayi, Venetik, 1903 **(In Armenian).**
6. Orats'uyts' Hayastaneayts' Yekeghets'woy Amerikayi 1921. Patkerazard ew havelumnerov, Boston, 1920 **(In Armenian).**
7. «Etchmiadzin» amsat'ert', Frezno, 1917-18, 1-9 **(In Armenian).**
8. «Asparez», Frezno, 1924, 1102, էջ 1 **(In Armenian).**
9. «Paros», Frezno, 1928, 4, էջ 76 **(In Armenian).**